

ՀԻՄՆԱՐԿԷՓ

ՁԵՌԱԳՐԱՅ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ


Ի Ս. ՂԱԶԱՐ

11 Մայիս, 1967: Հին երազ մը, որ տա-
րներէ ի վեր՝ Միթրաքեան Հայրերու
գրեթէ մտասեւեռումը եղած էր, ահա
կ'իրականանայ: Նոր ու արդիական Ձե-
ռագրատան մը հիմերը կը դրուին այսօր
Ս. Ղազարի մէջ:

Բարերարն է Տիար Պօղոս Իսպենեան,
ճարտարապետը՝ անոր որդին, Սնատն
Իսպենեան: Շէնքը պիտի բարձրանայ ի
յիշատակ բարերարին հանգուցեալ ծնո-
ղաց, Գէորգ եւ Լուիզ Իսպենեաններու,
որոնք Ս. Ղազարու գերեզմանատան մէջ
կը հանգչին, արդարեւ քունով:

Վանքին Ընդհ. Արքահայրը, զվեստա-
ւորուած, իր շուրջ ունենալով սարկա-
ւազներ ու գպիւրներ, կը սկսի արարողու-
թիւնը՝ զանգակատունէն կը հնչէ յետ
միջօրէի ժամը չորսը:

Վանքի բոլոր վարդապետներուն ու ա-
շակերտներուն հետ միասին, հոն է Մու-
րատ - Ռափայէլեանի Տեսչական կազմը



Կը պատրաստուի վեմքերը:

լրել եւ աշակերտութիւնը, մասնաւոր
փայլ մը տալով հասարակաց ուրախու-
թեան:

Պայծառ արեւ մը, Մայիսեան ջինջ եր-
կընքէն հրճուանքի ցոլքեր կը թափէ ներ-
կաններուն վրայ:

Շարական, ընթերցուած ու Աւետա-
րան, սաղմոս եւ ալեւու, փոխն ի փոխ կը
թաթովեն մեր շրթները:

Յուզիչ էր պահը, երբ հանդիսապէս գե-
տեղեցինք վեմքերը, որուն մէջ գրուե-
ցաւ մանրանկարեալ մազազաթ մը, բո-
ւորելը Յիշատակարանով մը:



Բարերարները կը երկուին:



Հիմնարկէֆի արարողութեան պահուն: Գրած. Արքաիոր աշակողմը՝ Տիար Պօղոս Իսպենեան
եւ որդին ճրտ. Անտոն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. - Յամի Տեան ՌԶԿԷ
(1967) եւ ի բուականիս Հայոց ՌՆԺԶ, ի
մետասան աւուր ամսեանն Մայիսի, հան-
դիսական աղօթիւք եւ պաշտամամբ եղաւ
հիմն նորոյ Մատենադարանի Ձեռագրաց
Միթրաքեան Հարց ի Սուրբ Ղազար Վե-
նետոյ:

Շինեալ կանգնեցի սա Տերամբ եւ օրի-
նութեամբ Տիրամօրն՝ Պաշտպանի Ուխ-
տիս, ի յիշատակ Գէորգայ Իսպենեան եւ
կողակցի նորին Լուիզայ, արդեամբք
բարերարութեան որդւոյ նոցին Պօղոսի
Իսպենեան, եւ որդւոյ սորա Անտոնի, որ
է նարտարապետ գործոյս, ի յաւերժ
պահպանութիւն մեծաց զանաւոց Հայկազ-
նեանս տոհմի:

Ի մուտս յորեկինի երկերիւր եւ յիսնե-
րորդ տարեդարնի մտից Միթրաքայ Ար-
քայի եւ Միաբանութեանս ի Սուրբ Ղա-
զար:


25 ստորագրութիւններով վաւերաց-
ուած Յիշատակարանը, կարմիր նարտով
էր կապուած, կնքամոմով խցուած շիշի
մը մէջ. վեմքերն մէջ գրուեցան նաեւ
տղայիւր Նարեկ մը, շարք մը հնչուն դը-
րամներ, հայկական մետաղներ՝ Սահակ
Մեսրոպի, Միթրաքի, Ալիշանի, Սայ-
եաթ Նովայի:

Այս է հին սովորութիւնը, յանձնարար-
ուած նաեւ մեր Մաշտոցներու խորագիր-
ներէն:

Յուզումը նշմարելի էր յատկապէս բա-
րերարին զեմքին վրայ, երբ աշխատաւո-
րը վեմքերը թաղեց կրաշաղախի փոսին
մէջ:

Ծափահարութիւններ:

Կը սկսէր Թարգմանչաց շարականը, Ս.
Ղազարի այս նոր Ձեռագրատան վրայ
հրաւիրելու՝ Սահակի ու Մաշտոցի հզօր
բարեխօսութիւնը եւ պաշտպանութիւնը:



Յիշատակարան մագաղաբը:

Արարողութենէն ետք, վանքին ճաշարահին մէջ, տեղի ունեցաւ պատուոյ ընդունելութիւն. բաժակներ պարպուեցան բարերարներուն կենաց, ջերմ ու եղբայրական ուղերձներով:

Շատեր՝ որ այցելած են Սուրբ Ղազար, պիտի յիշեն այն փոքրիկ սենեակը, ուր զեռնուած է Կուստինտնոյ յախճապահներու զեղեցիկ հաւաքածոն, ուրիշ ձեռագիրներու, արծաթէ աշխատանքներու եւ հայկական բանուածքներու հետ. այդ փոքրիկ սենեակը կը կոչուի Իսպենեան թանկարան. բոլոր առարկաներն ալ նուէրներն են Տիար Պօղոս Իսպենեանի, որ

այսօր կ'իրականացնէր իր երեսնամեայ մեծ փափաքը:

Նոր Մատենադարանը, միմիայն ձեռագիրներու եւ հնաոխր յարզի մատենաներու պիտի վերապահուի, եւ պիտի ունենայ ամէն արդիական սարքաւորում՝ ընդգէմ հրդեհի եւ զոգութեան, խոնաւութեան եւ ցուրտի. պիտի ունենայ ներքին մշտատեւ միակերպ ջերմութեան եւ խոնաւութեան աստիճան:

Բոլորակաձեւ չէնք, տասը մէթր տրամագիծով, պիտի բարձրանայ վանքին հարաւ արեւելեան (Լիտուի) կողմը, միւս չէնքերէն թեթեւօրէն անջատ, զեղեցիկ կամարակապով մը անոնց միացած: Աւելի քան վեց հազար հատորի տարողութեամբ՝ ներքին երկու յարկաստիճաններով, պիտի ունենայ ցուցադրութեան եւ պահեստի անջատ բաժիններ, զեղարուեստական կահաւորումով: Պիտի չունենայ արտաքին մուտք, պարտէզի կողմէն. լուսաւորութիւնը միայն առաստաղէն:

Ու հիմա, մինչ մէկ կողմէն վանքին մէջ տեղի կ'ունենայ նորոգութեան աշխատանքը, զարմանելու համար Նոյեմբերի ջրաղէտին հետեւանքով փճացած մասերը, միւս կողմէն պիտի սկսի նոր Ձեռագրատան շինութեան դրօժը, որ արդէն բաւական յարազեցաւ, մինչեւ որ կարելի եղաւ Վենետիկի զեղարուեստական յուշարձաններու պահպանութեան Կոմիտէին հետ համաձայնութիւնը զոյգացնել:

Մխիթար Արքայօր եւ Մխիթարեան Մխարանութեան Սուրբ Ղազար հաստատութիւնը 250ամեայ տարեդարձին յիշատակով (1717-1967) ծրագրուած հանդէսներու ընթացքին (Սեպտեմբեր 8էն ետք) պիտի կատարուի նաեւ պաշտօնական բացումը Ձեռագրաց այս նոր Մատենադարանին, որ անտարակոյս մեծագոյն յուշարձանը պիտի ըլլայ այս նուիրական տաքարձը անմահացնող:

Հ. Ն. Տ. Ն.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԳԱՀԱԿԱԼ

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ Ի Ս. ՂԱԶԱՐ

24-26 ՄԱՅԻՍ, 1967

Եւրոպայի եկեղեցական ու մշակութային կեդրոններուն մէջ, Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսին կատարած այցելութիւններու (Ապրիլ-Մայիս 1967) վերջերեքեր հանդրուանը կը կազմէր Վենետիկի Ս. Ղազար կղզեակը, ուր կը ժամանէր Վեհափառ Հայրապետը, Մայիս 24ին երեկոյեան, Միլանէն եկող զնացքով: Վեհ. Կաթողիկոսին կ'ընկերանային Գրգ. Տ. Գարեգին Եպսկ. Սարգիսեան, Տեսուչ Անթիլիասի զպրեկանքին, եւ Տ. Արսէն Ծ. Վ. Աւետիքեան, քարտուղար միութեան փոխ - յարարեցութիւններու Յանձնախումբին:

Վեհափառ հիւրն ընդունելու համար՝ կայարան փութացած էին Վենետիկի Քաղաքապետը Ճրտ. Տիար Ճ. Ֆաւարեթիոյ Ֆիսքա, Քաղաքապետարանի Ընդհ. Քարտուղարը, քաղաքային ոստիկանութեան Ընդհ. Հրամանատարը, Միարանութեան Ընդհ. Արքայօր Գրգ. Հրամանակ Վրդ. Կէտիկեան, Ֆրանսայի հայ կաթողիկէներու Առաջնորդ Գրգ. Կարապետ Եպսկ. Ամատունի, Վենետիկի Վսեմ. Միւրանաւոր Պատրիարքին ներկայացուցիչ Գրգ. Ճ. Սքարփա, Սարկաւազապետ Ս. Մարկոսի տաճարին, Մուրաթ-Ռափայէլեան Վարժարանի տեսչութիւնն ու աշակերտութիւնը, վարժարանին զրօշակով, Մխիթարեան բաղամթիւնի շէնքեր եւ խումբ մը ազգայիններ, այլ Հայեր եւ խումբ մը ազգայիններ, Վենետիկէն ու շրջանակէն: Քաղաքապետ

տարանի մասնաւոր կարգադրութեամբ, կայարանը ծաղկազարդուած էր ի պատիւ Վեհափառ Հիւրին:

Ժամը 18.40ին կառախումբը կը հասնէր Վենետիկ, ուր Վեհափառը ջերմօրէն կ'ողջունէր բոլոր ներկաներէն: Հիւրերը, լուսանկարիչներու փայլակներու տարափին տակ, ուրախութեամբ կ'ուղղուէին դէպի Ս. Ղազար:

Քաղաքապետը իր անձնական շոգեմակով կ'առաջնորդէր Վեհափառ մինչեւ վանքին նաւամատոյցը: Կը հետեւէին ուրիշ շոգեմակոյկներ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին Գահափառը ոտք կը դնէր Մխիթարի օրհնեալ հողին վրայ, Սուրբ Ղազարի երկդարեան զանգերու հանդիսաւոր զօղանջներուն մէջ, եւ իսկոյն թափօրով կ'առաջնորդուէր դէպի եկեղեցի, «Հրաշափառ» եւ «Այսօր աստուածութիւն» շարականներու զոհարանական թրթռացումներով:

Յաւարտ շարականներուն, կը հնչէր Ճիւս սաղմոսը, «Ուրախ եղէ ես... ի տուն Տեառն երթիցուք մեք»: Ապա Վեհափառը յուզումով կ'արտասանէր «Պահպանիչ»ը, եւ խմբական «Հայր մեր»ով կ'աւարտէր հոգեպարար արարողութիւնը: Իսկոյն կը վերակազմուէր թափօրը, ու Վեհափառը եւ իր հետեւորդները կը բարձրանային վանքին Արքայարանը, ուր պիտի իջեւանէին անոնք՝ Վենետիկեան այցելութեան այս երեք օրերուն: